ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1557-Ա

«ՍԱՐԻԳԱՋ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով «ՍԱՐԻԳԱՋ» ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Սեյրանի Հակոբյանի (ծնված՝ 03.11.1988 թ.) դիմումը, հիմք ընդունելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման

համաձայնությունը և 2024H2N6KB (06.09.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի սեփականության հանդիսացող 06-103-0146-0135 ծածկագրով 0,01878 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետություն, Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 25-27 կմ 1/1 պարիսպ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0146-0135 ծածկագրով 0,01878 հա բնակավայրի բնակելի կառուցապատման նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և հողամասի վրա կառուցված պարիսպի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Փամբակ համյանքի սեփականության իրավունքը Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 25-27 կմ 1/1 պարիսպ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0146-0135 ծածկագրով 0,01878 հա բնակավայրի բնակելի կառուցապատման նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և «ՍԱՐԻԳԱՋ» ՍՊԸ-ի կողմից հողամասի վրա 2020 թ-ին ինքնակամ կառուցված 2.87 ք/մ մակերեսով պարիսպի նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

4.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, «ՍԱՐԻԳԱՋ» ՍՊԸ-ի կողմից 06-103-0146-0135 ծածկագրով 0,01878 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 2.87 ք/մ մակերեսով պարիսպը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համյանքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

27 դեկտեմբերի 2024
գ. Փամբակ